

**Տեղեկատվություն 2011թ հունվար-դեկտեմբեր ամիսներին
ՀՀ Լոռու մարզի և ԱՊՀ անդամ պետությունների վարչատարածքային միավորների միջև
համագործակցության վերաբերյալ**

Թիվ	Համագործակցություն	Տարեթիվ	Ընթացիկ վիճակ
1.	ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի մոտ կայացած խորհրդակցության թիվ N 01/03 արձանագրության 3-րդ կետի համաձայն, 2011թ ապրիլի 17-19-ին Երեւանում կայանալիք Ռուս-Հայկական միջտարածաշրջանային համագործակցության Առաջին ֆորումին եւ Արդյունաբերական ինովացիայի ցուցահանդեսին Լոռու մարզի մասնակցությունն ապահովելու վերաբերյալ	10 մարտի 2011թ	Ս,թ, ապրիլի 19-21-ին Լոռու մարզի պատվիրակությունը մասնակցել է Ռուս-Հայկական միջտարածաշրջանային համագործակցության Առաջին համաժողովին: Արդյունաբերական ինովացիայի ցուցահանդեսին մարզից մասնակցել են 6 տնտեսավարող սուբյեկտներ («Բագուս-Ֆիրմա» ԱԿ, «Սարտոն» ՍՊԸ, “ԻՆՍԻ-ՆՏԿ”ՓԲԸ, «Դարբինյան ստիլիսա» ՓԲԸ, «Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ, «Գեմս դե Լյուքս» ՍՊԸ), որոնք ներկայացարել են իրանց արտադրանքը:

**Տեղեկատվություն 2011թ հունվար-դեկտեմբեր ամիսներին
ՀՀ Լոռու մարզի և այլ երկրների վարչատարածքային միավորների միջև
համագործակցության վերաբերյալ**

Թիվ	Համագործակցություն	Տարեթիվ	Ընթացիկ վիճակ
1	Լոռու մարզպետարանի եւ Բրիտանական խորհրդի միջեւ բանավոր պայմանավորվածություն	2011թ Մարտի 10-12	<p>Լոռու մարզպետարանում կազմակերպվեց վավերագրական ֆիլմերի նկարահանմանը վերաբերվող սեմինար, որը վարում էր բրիտանացի փորձագետ Մառա Ռոսը: Նա ներկայացրեց վավերագրական ֆիլմերի դերը եւ ազդեցությունը առօրյա կյանքին: Ակցիան կազմակերպված էր Բրիտանական խորհուրդի կողմից «Բրիտանական ֆիլմերի 9-րդ փառատոն»-ի շրջանակներում: Այս տարի փառատոնը նվիրված էր մարդու իրավունքների պաշտպանությանը եւ կանանց դերի բարձրացմանը հասարակության մեջ:</p> <p>Վանաձոր քաղաքում այս ակցիայի շրջանակներում մարտի 10-ից 12-ը ցուցադրվեցին բրիտանական արտադրության «Արբոր», «Վարդագույն սարիներ», «Ժողովրդի թշնամիներ» 3 ֆիլմերը (հայերեն ենթագրերով):</p>
2	Լոռու մարզը որպես Եվրոպական Ռեզիոնների Ասամբլեայի լիիրավ անդամ	2011թ ապրիլի 4-5	<p>Լոռու մարզպետը մասնակցել է Աջարիայի Ինքնավար Հանրապետության Բաթումի քաղաքում տեղի ունեցած Եվրոպական Ռեզիոնների ասամբլեայի Մեւ ծովյան տարածաշրջանի քաղաքականության «Ընդհանուր սահմաններ, ընդհանուր լուծումներ» 2-րդ կոնֆերանսին: Արդյունքում ապրիլի 6-ին ստորագրվել է «Բաթումիի հռչակագիրը», որի համաձայն մասնակիցները պարտավորություն են ստանձնել համատեղ աշխատելու Մեծծովյան տարածաշրջանի համագործակցության և կայուն զարգացման համար</p>
3	Բանավոր պայմանավորվածություն Եվրոմիության պատվիրակության հետ	2011թ ապրիլի 11	<p>Ս.թ.ապրիլի 11-ին Լոռու մարզ էին ժամանել Եվրոմիության փորձագետներ Մարի Դոնովանը եւ Էնթոնի Վարմինգթոնը: Հայաստանում Եվրոմիության պատվիրակության հետ համատեղ աշխատանքի արդյունքում փորձագետների մոտ ստեղծվել էր նոր գաղափար՝ Հայաստանում մեծացնելու Եվրոմիության մասին ճանաչողությունը: Աշխարհագրական դիրքից կախված ընտրվել էր Լոռին, որտեղ 2011-ի վերջում եւ 2012-ի սկզբին կստեղծվի 2-րդ տեղեկավորական կենտրոնը Եվրոմիության մասին:</p>
4	ՀՀ կրթության և գիտության նախարարության, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության և «ԳԲԵՖ» կազմակերպության միջև 2008 թվականին ստորագրված եռակողմ համագործակցության պայմանագրի շրջանակներում	2008թ	<p>Լոռու մարզպետարանում սեպտեմբերի 28-ին կայացավ հերթական հանդիպումը «ԳԲԵՖ» թոշակառու մանկավարժների ֆրանսիական կազմակերպության ներկայացուցչի հետ, վերջինիս առաքելությունն էր 2011 թվականի հոկտեմբերից Լոռու մարզում (60 օր տեւողությամբ) շարունակելու ՎՊՄԻ-ի, ԵԿՏՍ-ի Վանաձորի մասնաճյուղի եւ «Միխիթար Գոշ» հայ-ռուսական համալսարանի ֆրանսերեն դասավանդող դասախոսների, ինչպես նաեւ, Վանաձոր, Ստեփանավան եւ Ալավերդի քաղաքների դպրոցներում ֆրանսերեն լեզու դասավանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ իրականացնելը: «ԳԲԵՖ»-ի 5-րդ այցելությունն է Լոռու մարզ, եւ ներակայացուցչի ներկայացմամբ մարզում իրականացրած աշխատանքները ընթանում են նորմալ եւ պատշաճ մակարդակով:</p>

5	<p>Լոռու մարզպետարանի եւ Ֆրանսիայի Պրովանս-Ալպ Կոտ դ'Ազյուրի մարզի միջեւ Համագործակցության շրջանակային պայմանագիր</p>	2008թ հունիսի 18	<p>Ֆրանսիայի հանրապետության Մարսել քաղաքում ստորագրված Համագործակցության շրջանակային պայմանագրի շրջանակներում այս տարվա փետրվար եւ ապրիլ ամիսներին Վանաձոր էին այցելել Մարսելի Առեւտրա-արդյունաբերական պալատից փորձագետներ, որոնք իրականացնում են Լոռու մարզի բոլոր տարածաշրջանների համար տնտեսական ինտերակտիվ քարտեզի աշխատանքները: Հանդիպման ընթացքում քայլ առ քայլ ներկայացվեց կատարված աշխատանքները, որոնք տարվա ընթացքում շարունակական բնույթ կունենան:</p> <p>Մայիսի 23-ին Լոռու մարզ էին այցելել Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս-Ալպ Կոտ դ'Ազյուրի ռեզիոնալ ներկայացուցիչները, ռեզիոնալ նախագահի խորհրդական Միշել Բոդինյեն եւ Միջազգային կապերի եւ Եվրոպական համագործակցության պատասխանատու Ֆիլիպ Կիչովլազը: Այցելության նպատակն էր մարզ-ռեզիոն հարաբերությունների խորացումն ու բարեկամական կապերի ամրապնդումը, ինչպես նաեւ Ֆրանկոֆոնիայի զարգացումը մարզում: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություններ ձեռք բերվեց հետագա համատեղ աշխատանքների համար առաջարկություններ ներկայացնել ֆրանսիական կողմին, կազմվել է մտադրությունների արձանագրություն</p>
6	<p>Համագործակցություն Լոռու մարզպետարանի եւ Ֆրանսիայի Պրովանս Ալպ Կոտ դ'Ազյուր մարզի Զինվորական եւ Հյուրընկալ Երուսաղեմի Սուրբ Ղազար Միաբանության միջեւ</p> <p>Պրովանս կոտ Դ'Ազյուր առաջնորդա-կան կարգադրություն N09-01</p>	2009թ հոկտեմբերի 1	<p>Սպիտակ քաղաքում 2009թ-ից ստեղծված է «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» կոմիտեն, որի կազմում ընդգրկված են ՀՀ Սփյուռքի նախարարը, Լոռու մարզպետարանի եւ Սպիտակի քաղաքապետարանի ներկայացուցիչներ եւ ՀՀ-ում Երուսաղեմի Սուրբ Ղազար Միաբանության դեսպան Օհան Հեքիմյանը: Կոմիտեի աջակցությամբ 2010թ-ին «Սպիտակ» ծրագրի շրջանակներում, Լոռու մարզի Սպիտակ քաղաքի առողջապահական հիմնարկների հետ իրականացվել են բարեգործական ծրագրեր, մատակարարելով դեղորայք եւ բժշկական պարագաներ:</p> <p>Այս համագործակցությունն հետագայում ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, ՀՀ վարչապետի անունից ա.թ. մայիս ամսին հրավերք էր ուղարկվել Ֆրանսիայի Ավագ Առաջնորդ Դքսուհի Տիկին Ժակլին Դը Բրիսակին սեպտեմբեր ամսին Հայաստան հրավիրելու կապակցությամբ:</p> <p>Հրավերքն ընդունվել էր Դքսուհու կողմից եւ այցն իրականացվեց ա.թ.</p>

			<p>սեպտեմբերի 19-ին:</p> <p>Այցի շրջանակներում Դքսուհին եւ Լոռու մարզպետը փոխադարձ գոհունակություն հայտնեցին մարզի Սպիտակ քաղաքի եւ այլ բուժհաստատություններում ֆրանսիական կողմից ծավալած ծրագրերի բարեհաջող իրականացման համար, եւ Դքսուհին հույս հայտնեց շարունակելու բարեգործությունը</p>
7	ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Չարլզ Լոնսդեյլ ի այցը Լոռու մարզ	11.08.2011թ	<p>Դեսպանի հավատարմատարը հետաքրքրված է մարզում գործող հասարակական կազմակերպությունների աշխատանքներով, մասնավորապես, հարց է բարձրացվել WMCA կազմակերպությանը Լոռու մարզի Փամբակ համանքում տարածք տրամադրելուն</p>
8	ՀՀ-ում Գերմանիայի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Հանս -Յոխեն Շմիդթի այցը Լոռու մարզ	18.08.2011թ	<p>Դեսպանը հույս է հայտնել, որ Լոռու մարզի հետ կարող են համագործակցել կոնցենսիոն վարկերի ներդրմամբ, որոնք կնախատեսվեն նախապես ընտրված եւ նախապատվություն ունեցող ծրագրերի համար:</p> <p>Առաջարկվել է նաեւ գերմանական մեծ փորձը թափոնների վերամշակման բնագավառում:</p> <p>Մարզպետը կարեւորել է մարզում լեռնամետալուրգիայի բնագավառում այդ փորձի կարեւորությունը, եւ պայմանավորվածություն է ձեռք բերել դեսպանի հետ, նորից հյուրընկալելու դեսպանին Լոռու մարզում, «ԷՅ Սի ՓԻ» ընկերությունում շնորհանդես անցկացնելու նպատակով:</p>
9	ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության քաղաքական հարցերով պատասխանատու Չադ Վագների այցը Լոռու մարզ	23.08.2011թ	<p>Դեսպանությունը նախընտրում է քննարկելու այնպիսի ծրագրեր, որոնք կունենան ավելի շատ մարզային նշանակություն, քան համայնքային</p>
10	ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության դեսպանության գործերի ժամանակվոր հավատարմատար պարոն Ռիկարդո Վինյոլոի այցը Լոռու մարզ	29.09.2011թ	<p>Այցելության նպատակը համագործակցության հաստատումն է Լոռու մարզի հետ՝ տարբեր բնագավառներում: Նրա տեղեկացմամբ, Արգենտինայում գործում են երկու ազգային ինստիտուտներ՝ գյուղատնտեսության և արդյունաբերության տեխնոլոգիաների, որոնք ներկայանալի են տարբեր երկրներում: Ազգային ինստիտուտի ներկայացուցիչները, ըստ հավատարմատարի, պատրաստ են լինել Լոռու մարզում և խորհրդատվություն իրականացնել հիշյալ ոլորտներում՝ այդ կերպ հաստատելով համագործակցություն:</p> <p>Արդյունքում մարզպետարանի կողմից պատրաստվում է համագործակցության առաջարկներ, որը կներկայացվի դեսպանություն:</p>

11	<p>«Հայկական Բնապահպանական Ցանց» կազմակերպության և Լոռու մարզպետի հետ հանդիպում (Հայաստան-Սփյուռք կապի ամրապնդում)</p>	29.09.2011թ	<p>Կազմակերպության ներկայացուցիչների այցի նպատակն էր մարզում իրականացնել էկո ծրագրեր՝ քաղաքային և գյուղական աղբի վերամշակման աշխատանքներին մասնագիտական աջակցություն ցուցաբերել ռազմավարական և արդեն գործող ծրագրերին՝ միջազգային փորձագետների և մասնագետների հրավիրմամբ, Օրհուս կենտրոնների փորձի տարածմամբ այլ համանքներում և այլ տիպի միջոցառումներով:</p> <p>Մարզպետն առաջարկեց, աշխատանքներն սկսել Ալավերդի քաղաքից և Թումանյանի տարածաշրջանից, քանի որ, մարզում թափոնների մշակման լուրջ և առաջնային խնդիր ունեցող տարածք է:</p>
12	<p>UNICEF-ի տեխնիկական աջակցությամբ իրականացվող տարածքային սոցիալական զարգացման ծրագրերի շրջանակներում Լոռու մարզի պատվիրակության աշխատանքային այցելությունը Իտալիայի Էմիլիա-Ռոմանիա մարզ</p>	2011թ սեպտեմբեր	<p>Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգը Իտալիայի հանրապետությունում կիրառական տեսանկյունից դիտարկելու նպատակով Լոռու մարզի պատվիրակությունը մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի գլխավորությամբ սույն թվականի սեպտեմբերի 18-25 աշխատանքային այցով մեկնել էր Իտալիայի Էմիլիա-Ռոմանիա նահանգի Ռիմինի քաղաք մասնակցելու <<Աջակցություն Հայաստանում սոցիալական պաշտպանության ծառայությունների բարեփոխումներին>> ծրագրի սեմինար պարապմունքներին</p>

<p>13</p>	<p>Լոռու մարզպետարանի աջակցությամբ կազմակերպած ՀՀ գործարարների միության ու Գերմանիայի գործարարների միության ներկայացուցիչների հանդիպում Լոռու մարզի գործարարների եւ համայնքի ղեկավարների հետ</p>	<p>2011թ հոկտեմբեր</p>	<p>Հոկտեմբերի 13-ին մարզպետարանի նիստերի դահլիճում կազմակերպված հանդիպումը նպատակ ուներ աջակցել և օժանդակել մարզի գործարարներին և նպաստել Լոռու մարզում տնտեսության ճյուղերի զարգացմանը: Գերմանացի փորձագետները ծանոթացրին իրենց հարուստ փորձին: Ներկաներին հատկապես հետաքրքրեց գործարար միջավայրի զարգացման գերմանական մոդելը:</p> <p>Ըստ այդ մոդելի՝ համայնքապետարանները առանձնացնում են որոշակի տարածք և բանկային կառույցների կողմից տրվող ցածր տոկոսով երկարաժամկետ վարկերի միջոցներով այդ տարածքում ստեղծում են նպատակային գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ (շենք-շինություններ, ճանապարհներ, էլ. Ենթակայան, ջրամատակարարում, գազ և այլն), որից հետո հայտարարվում է նպատակային գործունեության գործարար առաջարկների (բիզնես-պլան) մրցույթ: Մրցույթում հաղթած գործարարին պայմանագրային հիմունքներով ամրացվում է տվյալ տարածքը և գործարարը իր արտադրանքից ստացված շահույթի հաշվին համեմատաբար կարճ ժամկետում մարում է վարկերը և դառնում տարածքի և բիզնեսի սեփականատեր:</p>
-----------	--	----------------------------	--

14	<p>ՀՀ Լոռու մարզի և ՉԺՀ Շանսի նահանգի միջև համագործակցության կապերի հաստատում և զարգացում</p>	<p>2011թ նոյեմբերի 12-20</p>	<p>Համաձայն Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանսի նահանգի կառավարությունից ստացված գրության՝ Շանսի նահանգի ղեկավարությունը ս.թ. ապրիլին պատրաստակամություն էր հայտնել հաստատել փոխշահավետ և երկարաժամկետ հարաբերություններ ՀՀ Լոռու մարզի և այդ նպատակով Լոռու մարզից հրավիրել պատվիրակություն՝ այցելելու Շանսի նահանգ:</p> <p>2011թ նոյեմբերի 12-20-ին ՉԺՀ Շանսի նահանգ էր մեկնել Լոռու մարզի պատվիրակությունը մարզպետ Ա. Նալբանդյանի գլխավորությամբ: ՀՀ-ում Չինաստանի դեսպանության և Չինաստանում ՀՀ դեսպանության կողմից նախապատրաստական լուրջ աշխատանքի շնորհիվ, բանակցությունների արդյունքում, Թայուան քաղաքում, 2011թ նոյեմբերի 14-ին ստորագրվել է Հուշագիր «ՀՀ Լոռու մարզի և ՉԺՀ Շանսի նահանգի միջև բարեկամական կապերի վերաբերյալ» եւ Արձանագրություն «ՀՀ Լոռու մարզի և ՉԺՀ Շանսի նահանգի միջև առեւտրա-տնտեսական համագործակցության մասին», ապա՝ «Համագործակցության վերաբերյալ մտադրությունների արձանագրություն»՝ ՉԺՀ Շանսի նահանգի Յունչեն և Լոռու մարզի Ստեփանավան քաղաքների քաղաքապետերի միջև:</p> <p>Դեկտեմբերին երկու մարզերի առեւտրա-տնտեսական համագործակցության շրջանակներում մարզպետարանի կողմից ՀՀ ՏԳՆ է ներկայացվել «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Լոռու եւ Տավուշի մարզերում Լավվար-Կողբ տեղամասի 398քառ կմ տարածքում որոնողական եւ որոնողագնահատողական աշխատանքների կատարման վերաբերյալ առաջարկ ՀՀ ԱԳՆ փոխանցելու համար:</p>
----	---	------------------------------	---

15	Եվրոմիության պատվիրակու-թյունը Հայաստանում ներկայացուցչի Ֆրեդ Միլանի այցը Լոռու մարզպետարան	2011թ նոյեմբերի 23	<p>Մարզպետարանում կայացած ընդունելության ժամանակ ներկայացվեց այցի նպատակը, այն էր տարածաշրջանում լինի տնտեսական համահարթեցմանն ուղղված ծրագրերին աջակցություն, ֆինանսավորման 80% -ը կնախատեսվի գործնական եւ 20%-ը տեխնիկական ապահովման համար:</p> <p>Արդյունքում մարզպետարանը ներկայացրել է 4 ծրագրային նախագծեր (մարզի տարածաշրջաններում հակակարկտային կայանքների տեղադրում, մրգի եւ վայրի հատապտուղների վերամշակման փոքր արտադրամասերի, մրգի, կարտոֆիլի և բանջարեղենի պահեստավորման, տեսակավորման, փաթեթավորման տնտեսության ստեղծում եւ զբոսաշրջային B&B տների ասոցիացիայի հիմնում),:</p>
16	ՀՀ Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի հանդիպումը Ֆրանկոֆոն ռեզիդենների միջազգային ասոցիացիայի քարտուղարի հետ	2011թ նոյեմբեր-դեկտեմբեր	Նոյեմբեր ամսին հայտ է ներկայացվել Ֆրանկոֆոն ռեզիդենների միջազգային ասոցիացիային անդամակցելու համար: Հայտը բավարարվել է եւ 2011թ. դեկտեմբերի 7-ից Լոռու մարզը հանդիսանում է Ֆրանկոֆոն ռեզիդենների միջազգային ասոցիացիայի լիիրավ անդամ
17	ՀՀ-ում ԱՄՆ ապտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Ջոն Հեֆերնի հանդիպումը Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի հետ	2012թ. դեկտեմբեր	Դեկտեմբերի 28-ին նորանշանակ դեսպանի առաջին այցելությունն էր Լոռու մարզ, որը ճանաչողական բնույթ ուներ: Նա հետաքրքրված էր մարզում ԱՄՆ կառավարության ֆինանսական աջակցությամբ իրականացված ծրագրերի ընթացքի վերաբերյալ: